

զին ծախումէ աշխարհի համար, որ գեռ ևս երէկ աղնիւ և վերին աստիճանի դպայուն էր գէպի ամենատեսակ բարի գործ: «Հետեւ իր ինձ» ասում է անբարպական համարակաց կինը խեղճ, ողորմելի մշակուհուն անցնելով նրա առաջեցից ազմկալի ուրախութեամբ և պճնազարդութեամբ: Հետեւ իր ինձ գոնէ մի օր, և թշուառը հետեւումէ նրան: Նա ոտք է գնում այն կեանքի մէջ որ լի է անպարկեշտութեամբ և նախատինքով և այս կեանքին է նուիրում մօր արտասուքներով սրբագործուած հոգին: Հոգի որի համար այնչափ անմուռնջ աղօթքներ: Չերմազին բարեմաղթութիւններ վեր բարձրացան դէպի երկինքը:

«Հետեւ իր ինձ» ասում է անհաւատ մարդը երիտասարդ սերունդին, խօսքով, գրչով սերմանելով ամեն ինչ աւերող—քանդող վարդապետութիւնը: «Հետեւ իր ինձ», որովհետեւ ինձ համար ամենալաւ հնազանդութիւնը բանականութեան հնազանդութիւնն է և ամենաբարձր փառքը՝ մտաւորական: Աւաղը քան մարդիկ հետեւումեն նրան: Ո՞քան մարդիկ հրճուանքով, ուրախ ծափահարութեամբ գնում են մզկիցնաբար յայտարարելու, աղքատութիւնից և տանջանքներից կատազած բոլոր սրտերին, որ երկինքը ունայն բան է, որ Աստուած չէ ընդունում մեր աղօթքները և որ սչնչութիւնը ամեն բանի վախճանն է: «Հետեւ իր ինձ»: Ահա այն բացականչութիւնը, որով նրանք դառնում են բոլորին, քանի գեռ ևս լայն ճանապարհով ցած են իշխում: Բաւական չէ որ իրանք կորած են, հարկաւոր է գեռ ուրիշներին էլ կորցնել:

Ի վերայ այսօր ամենայնի, Դու նրանց սպասում էիր ո՞վ Յիսուս, նրանց համար նոյնակ, սչարչարուեցիր և Քո արիւնաշաղախ խաչի բարձրութիւնից նրանց բոլորին ասացիր, «Եկացք առ իս»: Բայց տեսան արդեօք այս խաչը, եղբայրներ: Նրանք արդեօք նանուժում են նրան, որին մենք անուանում ենք Փրկիչ: Խոկ մենք ի՞նչ որել հոգիներին

Նրա կողմը գրաւելու համար: Տէր, զարթեցրու մեր խիղճը, աղասիր մեզ մեր անտարբերութիւնից անհոգութիւնից և անձնական բարեվայելութեան սիրուց, բացավառիր մեր սրտերը, ներշնչիր մեր մէջ՝ մեծամեծ զոհաբերութեանց ջերմ ցանկութիւն, և թոյլ տուր մեզ ցոյց տալ աշխարհին, որ Քո գործը շարունակուումէ և որ ամենաբարձր յաղթութիւնը ապահոված է հաւատուի և բարի գործերով յօդուտ մերձաւորի:

Թարգմ: ԽՈԲԵՆ ՔԱՀ, ԽԱՌՋԱԳԻՆԵԱՆՑ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓՐԵՕԲԵԼԻ

ԿՐԹԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ,
ԸՆԹԱԶԱԲԱՆ.

(Եպրունակութիւն) *.



Բէօբէլի կրթական եղանակը աղնուացնումէ, երեխայի ձգութեանը և զարգացնումէ նրա ընդունակութիւնները ըսկըսած նրա առաջին տարուց:

Կրթութեան այս նոր եղանակը, որ մենք ներկայացնում ենք և առաջարկում ենք նրա հիմնական զարախաններն ուսումնասիրելու և իրագործելու՝ կարելի է անուանել մի եղանակ՝ որ լաւ է մշակուած: Չէ կարելի ասել թէ՝ աւելացնելու բան չի մնում և գործադրելու համար չէ կարելի փոփոխութիւնների ենթարկել: Մյոյն եղանակը հետաքրքիր է ամեն մարդու համար, որ զրազուելու է երեխայի հետ նրա ծնուելու օրից սկսած և ստիպուած է կատարել ծանր պարտաւորութիւններ մի է-

* Ցես նախընթաց համարում:

ակի վերաբերութեամբ, որ սկզբում ոչ կամք ունի՝ ոչ էլ ցանկութիւն։ Կրթութեան հիմնական գաղափարը հենց սկզբից պէտք է գործադրութիւն գտնի, եթէ չեն կամենում որ փոքր երեխան պահանջող ու կամակոր լինի կարեռ է ճանաչել երեխայի ընտառութիւնը և այն խնամքը, որ հարկաւոր է նրա առողջութեան և կազմակերպութեան համար։

Մի խելացի և փորձուած մայր հեշտութեամբ կարող է հետեւել այս նոր եղանակին և դրա համաձայն կրթել իր որդուն։

Այս եղանակը համապատասխանում է յառաջադիմութիւնը և զրանով կարելի է կանոնաւոր կերպով զարգացնել երեխային։

Եթէ մի քանի ժամանակից յետոյ կրթութեան հիմունքը տարածուելին ցուցական եղանակի համաձայն՝ այն ժամանակ հարկաւոր կը լինի աւելի հետեւել որ այդ գործը զարգանայ և հասնի իր գաղաթնակետին։

Այժմ ուսումնասիրելով և գործադրելով այդ եղանակը՝ կարելի է անցնել զարգացման բոլոր աստիճաններով՝ որպէս զի մարդ կարողանայ համապատասխանել իր բարձր նշանակութեանը և երբ այդ եղանակի զարգափարն այնպէս կը հասկացուի, ինչպէս հարկն է, կը զարթեցնի ամենամեծ հետաքրքրութիւն։

Ահա սպրօֆէսօր Դատօի ճառը որ նա արտասանեց, երբ Սեռշատելում այդ եղանակի մասին վարժուհիների համար դասախոսեց։

Հին ժամանակներում ասաց Պագօն, երեխային յանձնում էին ստրկի խնամատարութեանը։ Քրիստոնեայ երկներում էլ չընացնով այն գեղեցիկ օրինակներին որ մի քառնի սուրբ հայրեր տալիս էին, երեխան չերինամուռմ այնպէս՝ ինչպէս պէտք է խնամուել։ Միջին դարերում էլ կրթութիւնը շատ տարօրինակ է եղել։ Երեխամեայ պատերազմի ժամանակ էլ զարմանալի զրութեան մէջ էր կրթական գործը երբ յայտնուեց սլաւոնական յայտնի մանկավարժ Կօմէնիուսը, որին անուանում էն «Հայր ցուցական եղանակի»։ որին Միշլէն անուանում է «Մանկավարժութեան Գալլէյ»։

Ցուցական եղանակով հրապուրուում է, թուասոն, իմիլի հեղինակը, առարկայական (ցուցական) եղանակի նորագոյն քարոզիչը, թուասոն ուղղակի առաջարկեց ցուցական եղանակը։ Այդ եղանակն էլ ընդունեց ժողովրդական ուսումնարանի հիմնադիր Պէստալոցցին նոյնը, Ֆրէօրէն էլ ընդունեց իր մանկական պարտիզի համար։ Ֆրէօրէլը Կօմէնիուսից և Պէստալոցցուց յետոյ յայտնուեց, բայց կարողացաւ իրագոծել մանկական պարտէզը ուր մայրերը կարող են և պէտք է գործեն։ Հենց այդ տեսակ ուսումնարանի մասին էին երազում առաջընթաց մանկավարժները։

Զարգացնել երեխայի խելքը, մարզել նրա աչքը, կատարելագործել նրա ձեռավարժութիւնը, զարթեցնել վարժել, կազմակերպել նրա բոլոր ընդունակութիւնները երկրաշափական արգուածներով (ֆիգուր), որոնց Պէստալոցցին շատ մեծ նշանակութիւն է տալիս, զրգել երեխային գեպի քննադատութիւնը, սովորցնել նկարչութիւնն, ձեռադրործութիւնն, խնամքով շինութիւններ կառուցանել պարտիզանութիւնն, ահա զրանք են զործնական ուսման հիմքերը։ Գաղափարական բաները սովորեցնում են երգերով, պատմելով բանասաեղական և արձակ զրուածքներից։

Գերմանիայի Բլանքէնբուրգ քաղաքումն էր, ուր բայցուեց Ֆրէօրէլեան առաջին մանկական պարտէզը։ Այդ ժամանակից սկսած, այդ տեսակ ուսումնարանները տարածուեցին գերմանական Զուիցարիայի զանազան մասերում զորօր, Ցիւրիխում Մէն—Դալէնում Լիւցերնում։ Ժընէվում։

Մի յայտնի գիտնական, որ մանկական պարտիզի մասին օրինրգաց դասախոսում էր՝ ասաց. «այն անձննք, որոնք իրենց նմաններին են կրթում՝ կը փայլեն որպէս ստաղեր երկնակամարի վերայ, օրինրդներ, որքան արգեօք ձեր աստղերն աւելի գեղեցիկ պէտք է, փայլեն՝ քան մերը, զիալէք ինչու համար, որովհետեւ մենք միայն պատանեկութեան և երիտասարդութեան ուսուցիչներն ենք, այն ինչ գուք կոչուած եք քնքոյց, մատաղ, անկեղծ խելքի

ու սրաի մէջ ցանել առաքինութեան և ճըշ-
մորտութեան սերմեր: Այս, մեր գործը գե-
ղեցիկ է և կարևոր, բայց ձեր գործը կարող
է լինել աւելի մեծ, եթէ լիովին և սրբու-
թեամբ կատարէք ։

Եւրոպայի բոլոր քաղաքակրթուած երկրնե-
րում զանազան ճիւղերի մասնագետները հա-
ւանութիւն են տուել Ջրէօրէլի մանկավար-
ժական նորաձեւ փոփոխութիւնների մասին,
բայց կասես թէ մի կերպ աննշամբելի են մը-
նացել բժիշկների կարծիքները: Ասկայն բժիշկ-
ների վիսցութիւնները պէտք է շատ ծանրա-
կշիռ նշանակութիւն ունենան, որովհետեւ
նրանք մի որոշ կողմից շատ աւելի բարձր են՝
քան ուսուցիչները: Ծնողները և ուսումնա-
րանների վարչութեան անդամները, նրանք ա-
ւելի լաւ գիտեն առողջապահութիւնն ընդ-
հանրապէս և մանաւանդ բարոյականութեան
առողջապահութիւնը, որ առաջնի հետ սերտ
կցուած է: Այդ սպասմառով էլ բժիշկների
կարծիքների վրայ հրավիրում ենք առանձին
ուշադրութիւն դարձնել:

Կարելի է մեծ հատորներ կազմել այն բոլոր
կարծիքներից, որ գերմանական, անգլիական,
ֆրանսիական, հոլանդական, զույցարական
բժիշկները զրել են մանկական պարախզի ֆի-
զիկական, բարոյական, մտաւոր առաւելու-
թեանց մասին, բայց բաւական է յիշել նրան-
ցից միայն մի քանիսի կարծիքները:

Կիուշատելի բժիշկ Գիւլիօմն ասումէ.
« Մանկական ուսումնարանների մէջ պէտք է
անպատճառ ներմուծել Ջրէօրէլի կրթական
եղանակը: Պէտք է կառավարիչներին սահման
հիմնելու և հովանաւորելու Ջրէօրէլի եղա-
նակի ուսումնարաններն այդ գործին պէտք
է մանկակցնեն և օգնեն բարեգործական ընկե-
րութիւնները և մասնաւոր անձինք ։»

Բժիշկ Քօէնգէն՝ ասումէ. « մեծարդոյ Ֆլը-
րէօրէլն իր կեանքը նույիրեց ստեղծելու մի
ուսումնական հիմնարկութիւն, որ կարելի է
հասարակական բարեգործութիւն անուանել:
Այդ հիմնարկութիւնը կրում է՝ « Մանկական
պարտէղ » անունը: Ջրէօրէլը զանազան խա-

զեր, երգեր, պարախզանական աշխատանքը
զորձագրելով՝ միշտ ձգաել է գեպի մի բարձր
և օգտաւելու նպատակ՝ այն է՝ զարդացնել ե-
րեխայի մէջ օգտաւելու և ազատ գործունելու-
թիւն: Երբ երեխաններն ուսումնարանի նստա-
րանների վրայ նստած լուսմեն այնպիսի դա-
սեր, որ ոչ հասկանալ կարող են, ուրեմն ոչ
էլ առարկան սիրել կարող են՝ սկսումեն սաս-
տիկ ձանձրանալ, անուշագրութեամբ են սո-
վորում: որ յետոյ շատ դժուար է ուղղել
այն ինչ Ջրէօրէլի պարտիզում երեխանների
երենների վրայ երեւումէ: Հետաքրքրութիւն,
բաղդաւորութիւն և առողջութիւն: :

Բժիշկ Սորովիսօր Ջօնապարիվը՝ որ յայտ-
նի է առողջապահական զրուածքներով՝ ա-
սումէ, որ այժմեան կրթական եղանակը (մէ-
տօդ) վասնգաւոր է առողջապահական և բա-
րոյական տեսակետից, պէտք է որքան կարելի
է շուտ փոխարինել Ջրէօրէլի եղանակով:
Ջրէօրէլի կրթական եղանակն ուղղապէս բրդ-
խումէ Հուֆելանդի և Պիւտալօցցու գաղա-
փարներից, որ իր մանկավարժական եղանակ-
ներով երեխային մօտեցնումէ բնութեանը:
Պրօֆէսօրն շարունակելով ասումէ. Ջրէօրէլը
նմանումէ բնութեան մէծ քրմապեանն, որ
առաջարկումէ աշխատել բաց օգում: չօր ու
ցամաք ուսման եղանակը փոխարինումէ խա-
զերով, ձեռագործութեամբ, մարմնամորգու-
թեամբ, երգերով: Այդ կրթական եղանակը
պէտք է տարրական կրթութեան ամենալա-
ւեղանակը համարել: Կրթութիւնը պէտք է
մեզանում (ֆրանսիայում) այդ ձանապարհով
ընթանայ, որովհետեւ առողջութիւնը զոհուած
է փառախիրութեանը: Հասարակութեան հա-
մար ինչ տեսակ անդամներ պէտք է գառնան
այդ տկար: նուազած, նեարդային երեխաննե-
րը որոնք գեռ կեանքի մաքառումից առաջ
այզպէս տարարախա զրութեան մէջ են: Բա-
րենորոգումն կարեւոր է, որ արգէն սկսուել է:
Այդ է ապագայի ծրագիրը: որ երանի շուտ
իրագործուեր ։»

Բժիշկները շատ նպաստաւոր վկայութիւն-
ներ են տուել Ջրէօրէլը մանկական պարտի-

զի առողջապահական և բարոյական առաւելութեանց մասին և եթէ դրանց վրայ եւ աւելացնենք այն բոլոր վկայութիւնները, որոնք բերանացի խօսուել են՝ կողմանակիցներն աւելանալու են ամեն կողմից: Եթէ մարդկանց ծանօթացնեին այդ կրթական եղանակի հետ այն ժամանակ ծնողները և ուսումնարանական վարչութիւնները կարելի եւ որ վերջապէս իւրենց աշքերը բանացին և աեմնեին, որ այժման կրթական եղանակը վասնգաւոր է և հասկանացին որ ուսումնարանական եղանակի բարեփոխութիւնն անհրաժեշտ է:

Պիտք է ուսումնասիրել Ֆրեօրէլի կրթական եղանակի հական գաղափարը, այն ժամանակ կսացուի մի ընդհանուր գաղափար այդ եղանակի մասին և հասկանալի կը լինի, որ երեխային հենց սկզբից զեկավարելու համար կարեոր է այդ եղանակը: Պիտք է ուսումնասիրել այդ եղանակը, մանաւանդ, որ դա պահանջում է լաւ տեղեկութիւններ ունենալ բնախօսութեան (Քիշեօլոցիա) բնագիտութեան և հոգեբանութեան մասին:

Պիտապօցին և հայր Ճիրարը մեզ ցոյց են տուել թէ ինչ ուղղութեամբ պէտք է զարդացնել երեխայի ընդունակութիւնները: Ֆրեօրէլին իր կողմից տալիս է մեզ ամենալաւ միջոցներ այդ զարգացումը թեթևեցնելու և յարմարեցնելու երեխայի ճաշակին և պիտին:

Պիտք է զիտենալ ուղղապէս գործազրելու երեխայի վրայ կրթական գաղափարները և զիտակցարար օդուտ քաղել այդ կրթական միջոցներից, այդ գործադրական մասի նիւթն է: որ ուղղապէս իրագործում են երեխաների վրայ զասատան մէջ կամ ընտանեաց շրջանում:

Այդ տեղ է, որ վարժուհուն միջոց է արրուում մշակել վարժել իր մանկավարժական տաղանդը աւելի և աւելի լաւ իրագործել տեսական մասը զիտակցարար գործազրել այն միջոցները, որոնք նշանակուած են գործազրեական մասում:

Ֆրեօրէլի անյնառութեամբ: Այ քանի մատենագիրներ հետեւեալ կերպով են նկարագրում Ֆրեօրէլի անձնաւորութիւնը:

Ֆրեօրէլիս Ֆրեօրէլը, նախապատրաստական ուսումնարանների վերանորոգիչը, կրթութեան այն բնական եղանակի հնարողն է, որ ներգաշնակութեամբ զարգացնում է երեխայի մարմնը և խելքը հենց ծննդեան առաջին իսկ օրից սկսած:

Ֆրեօրէլը ծնուեց Օրերվէյրախում, որ գանուում է Շվարցըրուրդ-Ռուգօլշտատ Խշանանութեան սահմաններում 21-ն Ապրիլի 1782 թ. Արա հայրը զիւղական մի համեստ պատօք էր, որ կրթեց նրան քրիստոնէական հոգով, Պետք երեխայութեան ժամանակ՝ նար մայրը վախճանուեց և նա զրկուեց այդպիսով մարդական խնամքից, որ երեխայի համար մի պահանջ է: Կարելի է հենց այդ իսկ էր պատճառը, որ նա իր վարդապետութեան մէջ այնքան ջերմ կերպով պաշտպանում էր մայրական կրթութեան զաղափարը:

Նա իր հօր հետ գնում էր նրա աղքատ ժողովրդին այցելելու, ծանօթանում էր նրանց ընտանեկան ցաւերի, պիտոյքների հետ: Այդ տեսարանները զարգացրին նրա մատաղ սրտի մէջ սէր գէպի մարդկութիւնը և նրանում յլացաւ ցանկութիւն գրանց համար դարման վնասուելու:

Նա իր առաջին ուսումնարանն հիմնեց Քէմհառուում զա մի փոքրիկ քաղաք և Տիւրինգինուում: ուր նրա ուսումնարանը մինչեւ այսօր էլ ժողովրդի հոգացողութեամբ է պահպանուում:

Քէմհառուում վարձած տունը շատ նեղուածք էր նրա աշակերտների համար: Ապասելով իր նոր տան կառուցման աւարտելուն, խեղճ Ֆրեօրէլը առ ժամանակ բնակուում էր հաւաբնում: Նա շաբաթը միայն երկու հացով էր կերակրուում և իր առեն օրուան ուտելու բաժինը կաւիճով նշանակում էր պատի վրայ, որ աւելի չուտի: Վինը մասնակուում էր նրա աշխատանքին և զրկանքներից իր բաժինն էր սատնում: Այ կրթական եղանակը ժողովրդականացնելու համար արած ճանապարհորդութեանց ժամանակ նա շատ անդամ

դուրսն էր քնում որ կարողանայ վողի խնաշ-
յողութիւն անել և գործադրել աղքատ երե-
խաների կրթութեան համար: Երկար տարի-
ներ ժործուելուց յետոյ նա իր կրթական ե-
ղանակը կարեռ համարեց գործադրելու ա-
ւելի մասաղ երեխաների վրայ: Այդ պատ-
ճառով նա իր ուսումնարանն յանձնեց իր
ազգականներից մէկին և աշխատեց իրազոր-
ծել իր մասածած մանկական պարտէզը: Այս
մանկական պարտիզի մասին շատ քաղաքներ-
ում դասախոսեց և այդպիսի պարտէզներ
հիմնեց գերմանական զանազան քաղաքներում
այն է Համբուրգում Օբելզենում: Լեյպցի-
գում Գօտտայում և լին: Մահը ըլ թողեց նր-
ան շարունակել իր այդ մարդասիրական գոր-
ծունեութիւնը: Ֆրէօրէլլը որդի չուներ և
կարծես թէ միսիթարուելու համար նա իր բո-
լոր հայրական ինսամքը գործադրումէր ուրիշ-
ների երեխաները կրթելու համար: Այս վախ-
ճանուեց 1852 թ. յունիսի 21-ին Մարիէն-
թալում ուր և հիմնել էր մի ուսումնարան
մանկական պարտիզանուհիք պատրաստելու
համար:

Հասարակ բարբ ու վարքի տէր էր նա և
անշափ բարեսիրա, երեխայի նման համեստ էր,
նրա կերպարանքը անմեղ ու միամիտ աեսք
ուներ, որին նրա սպիաակ մազերը տալիս էին
մի առանձին պատկառելի գեղեցիութիւն: Մի-
ևնոյն ժամանակ շատ եռանգոս և հաստա-
տամիտ էր՝ երբ հանդիպումէր գժուարու-
թիւնների կամ արգելքների: Խնչպէս և հան-
ճարներին մեծ մասամբ պատահումէ՝ նա առ-
ժամանակ անյայտ մնայց բայց ունենալով հաս-
տատ հաւատ առ Աստուած՝ միշտ և ամեն
տեղ յաղթումէր: Այս անձնաատոր էր իր
վարակարներին, փառք չէր որոնում: Աիրում
էր զիտութիւնները և մանաւանդ բնութիւ-
նը: Որ հիմնավին ուսումնասիրել էր: Ֆրէօ-
րէլն աշխատումէր բնութեան օրէնքները
գործադրելով զարգացնել մարդկային հոգին:
Այս բնական մարդ էր, չէր կորցրել իր ինքն-
ուրոյնութիւնը, միշտ ընդունակ էր լոկ ու
հասկանալ Ստեղծողին և քարոզել սաեղծ-

ուածներին իր գործերով, իր խղմանքով:
Ահա այսպէս մարդ էր Ֆրէօրէլլ:

Այս չէր որոնում ոչ պատիւ՝ ոչ էլ հռչակ,
զինաւորապէս զրադուած էր իր մանկավար-
ժական գործով: Գոհ էր, որ հաւանութիւն
էր գանում իր մի քանի բարեկամներից և
աշակերտներից: Արդայ ժամանակ և մարդիկ
կը ճանաչնա, որ նա կրթութիւնը զրեց հաս-
տատուն և ուղիղ հիմքի վրայ և նրա գոր-
ծունէութեամբ ինչպէս նա ինքն ասումէր,
կանայք կը դառնան երեխաների համար պար-
տիզապանուհիք, կը ինսամեն մարդկային այդ
բոլոր բոյսերն իրենց սիրոյ ջերմով և կը ծաղ-
կացնեն առանց ձնշում գործելու, կը զարդաց-
նեն նրանց բնական ժամապարհով առանց կեղ-
ծելու և Աստուծոյ կամքին համաձայն: Այս
միւս մանկավարժներից նրանով է զանազան-
ուում որ հիմնավին ուսումնասիրել էր մարդ-
կային բնութիւնը: Այս մեզ ցոյց է տալիս ե-
րեխայի բոլոր յատկութիւնները, ձգտումները
և մարդկային զարգացման հիմնական օրէնք-
ները: Այդ տեղեկութիւնները նա ձեռք բե-
րեց գործնականապէս ուսումնասիրելով երե-
խաների կեանքն, անդադար քննելով մարդու
բնազգումը սկսած նրա ծննդեան օրից: Այս
ապրումէր երեխաների հետ և երեխաների հա-
մար, որոնց հետ խաղալով զտաւ այն բնական
ժամապարհները, որ երեխաներն իրենք էին
ցոյց տալիս, թէ նրանց հարկաւոր է գործու-
նեութիւն և շարժողութիւն:

Երեխայութեան ժամանակուայ տանջանքը
ձանձրոյթը, անդործունէութիւնը և այն ջերմ
սերը, որ նա ուներ մարդկութեան համար:
յորդորեցին նրան ուսումնասիրել վերոյիշեա-
լով: Այս աշխատումէր բարւոքել իր վարակից-
ների վիճակը ցոյց տալով նրանց բարօրու-
թեան անշարժ հիմքը խնամքով զարգայնե-
լով երեխայի ընդունակութիւնները՝ սկսած
նրա ծննդեան օրից:

Ֆրէօրէլլ և Նշանակութիւնների մասին:

Դիտողութեան ընդունակութիւնն յատուկ
էր Ֆրէօրէլլին: Գանազան զիտութիւնների

մասնադիտորեն ուսումնասիրութիւնն շարժապիթ եղաւ նրան կազմակերպելու իր մանկավարժական եղանակը։ Այս առանձին սիրով ուսումնասիրեց ընական զիտութիւնները—փիզիկա, մաթեմատիքան, երկրագործութիւնը, ճարտարագետութիւնը, քիմիան և լուսամանական կատարեց նա անտառապահի պաշտօն, յետոյ դարձաւ Բերլինի հանքարանական թանգարանի տեսուչ մասնակցեց Գերմանիայի ազգային մասնակցութեան պատերազմին, կատարեց ուսուցչի պաշտօն և վերջապէս որպէս մանկավարժ 1816 թուականից սկսեց ուսումնասիրել և մշակել կրթութեան դադարարը։

Այդ տեսակ ուսումնասիրութիւնները և ձեռքբերած զիտութիւնները ու նրա բազմաթեսակ գործունեութիւնը պէտք է իրենց ինիքը դնեն նրա մանկավարժական նոր եղանակի վրայ։ Դիմուար կարող էր նրա նախագծած կարգը խանգարուել։ Ընարած եղանակի գաղափարները պէտք է լինեն նրա վարդապետութեան սկզբնակետը յարմարեցրած և հասկանալի լինեն երեխաների համար և օգնեն անհատական զարգացմանը։

Թուական Ֆրեօրէլի եղանակը սկզբից կատարեալ է թուում բայց և կարօտ է զանազան տեսակ կատարելագործութեանց։ Այս ուսման զինաւոր նախագծերը որոշ էին, այդ պատճառով էլ կատարելագործելը չէր կարող դժուարութեանց հանդիպել։

Պէստալոցցւ հետ ունեցած յարաբերութեանց մասին շատ վեճեր են եղել, թէ արդեօք Ֆրեօրէլը Պէստալոցցու աշակերտներից է՝ թէ ոչ։ Ֆրեօրէլն իր երեք աշակերտների հետ (Հօլցհաուզէնի որդիքը) երկու տարի մնացել է Խվերդօնում Պէստալոցցու, այդ պատկառելի մանկավարժի մօտ որին և յարդում էր նրա գէպի մարդկութիւնն ունեցած սիրոյ համար։ Ֆրեօրէլն նախագասեցին շատ մանկավարժներից, որոնք նրանից առաջ էին գործել։ Բուսասոն իսկապէս միայն քնութեան ենթարկեց կրթական հիմն եղանակը և մաքառեց դրա գէմ։ Այս պարզ կերպով ցոյց տուեց, որ երեխային պէտք է ծանօթացնել առար-

կաների հետ, այսինքն պէտք է զիտութիւններ սովորցնել ցուցական եղանակով, բայց ցոյց չտուեց, թէ այդ եղանակն ինչպէս պէտք է իրագործել։

Բազէզօվլ չիրազործեց թուսսօի գաղափարները, նա առարկաները տեսնելու, քննելու տեղ, ցոյց էր տալիս նրանց պատկերները։

Պէստալոցցին ըմբանելով թուսսօի գաղափարները չնարեց ցուցական եղանակը, որ պահանջում է առարկաներ ցոյց տալ և այդ կերպով նա դարձաւ նախապատրաստական, ժողովրդական ուսումնարանի հիմնադիր։ Բայց այդ եղանակը յարմար չէր փոքր երեխաների համար, նա չը հասկացաւ գործունեութեան և չնարազիտութեան կարիքը, որ փոքր երեխաների համար մի տեսակ բնական պահանջ է։

Պէստալոցցին մի տեսակ նախազդացմոնք ուներ, նա կարծում էր, որ կարելի է աշակերտին արդիւնաբերութիւն սովորեցնել բայց նա զրա եղանակը չը տուեց, նա միայն նախազուշակում էր այն, ինչ ստեղծեց Ֆրեօրէլը։ Պէստալոցցին թուսսօի և բազէզօվի նման կարծում էր, որ ուսուցանելն է կրթութեան միայնակ միջոցը մոռանալով, որ երեխան ունի շարժողութեան կարեղութիւն և նախաձեռնութիւն (ինիցիատիվ)։ Պէստալոցցին իր վերջին ճառերից մէկում ասաց.—ես ձեզ սովորեցնում եմ Ա. և Բ., որ կարողանաք գործել և կարողանաք կատարել։

Ֆրեօրէլն առաջուց պատրաստուած էր Պէստալոցցու գաղափարները հասկանալու։ Այս իւր գործը ուղղում էր Պէստալոցցու հետ գուգընթացարար, բայց և աւելի կարողացաւ մօտենալ կրթութեան իսկական նպատակին։

ՖՐԵՕՐԷԼԻ ՄԱԿԱՐԺԱՐԱԿԱՆ ՍԻԶԲԻԿԱՆՔՆԵՐԸ

Որիորդ Վիազնօն Ֆրեօրէլի սկզբունքի մասին հետեւեալ հետաքրքիր տեղեկութիւններն է տալիս։ Ֆրեօրէլն երեխայութիւնից սկսած թէ, արտայայտում էր մտախոհութիւն և ուներ կտրուկ խելք, բայց և այնպէս փոփոխամիտ էլ էր նա։ Այդ փոփոխամտութիւնն էր

պատճառը, որ նա երկար ժամանակ չը կա-
րսղացաւ որոշել իր կոչումը: Այս իր մանկա-
վարժական գործունեութիւնն սկսեց միայն
1816 թուականից:

Երկար ժամանակ խորհրդակ ու բնութիւնը
քննելով՝ Ֆրէօրէլն հասկացաւ, որ Աստուած
յայտնուումէ փոքր և մեծ բաներում և վեր-
ջապէս այն եղբակացութեան եկաւ, թէ մար-
զը երեխայութիւնից սկսած պէտք է ծա-
նօթանայ բնութեան հետ և նրա զարգացու-
մը պէտք է հիմնուած լինի տիեզերքի ընդ-
հանուր կազմակերպութեան ուսումնասիրու-
թեան վրայ:

Այն քննադատութիւնները, որ արել են նրա զբուածքների մտսին, չէ կարող նսեմացնել նրա գործնական աշխատանքը, Մինչզեռ Ռուսացն և Պէտալօցցին թափառումէին տեսականութեանց մէջ, այդ խորհրդաւոր երազողն իր գաղափարներին ձեւ տուեց, ուսումնասիրեց երեխայի բնութիւնը կարեւոր համարեց շարժողութիւնը և եղբակացրեց, որ երեխայի անմիտ շարժողութեան կարեւորութիւնից պէտք է յառաջացնել խելացի գործողութիւններ: Այդ մաքով էր, որ նա հնարեց առարկաներ, որոնց ոչ թէ պէտք է ցոյց տային երեխային, այլ և պէտք է նրա ձեռքը տային: Այդ առարկաներն ունին մաթեմատիկական յարարելութիւն միմեանց հետ և իրական արժեք: Դրանցից մի քանիսը կարող են համարուել խաղալիկ բայց ոչ անմիտ և ոչ էլ ասպարդիւն, այլ սովորցնում և զարգացնում են երեխային: Այդ առարկաների օգնութեամբ երեխան հնարումէ ձեռախոսումէ. միջոց է զանում իր գործունեութեամբ և աշխատանքով իրագործել իր մաքերը և այդ աշխատանքը հեռացնում է երեխային սարկական կերպիւ նմանեցնելուց, ստիպում է նրան ստեղծել և երեխային գարձնումէ մոտածող էակ: Պարապելով երեխմն արուեստով, երրեմն հընարադիտութեամբ՝ նա պատրաստուումէ մերժամանակի պահնաջին համաձայն հնարադէտ արուեստաւոր գառնալ: Ամեն գործում հնագիտութիւնն մացնել՝ կը նշանակէ գարզացնել

երեխայի ճաշակը գեպի զեղեցիկը, որ յետոյ
ներգործելու է նրա մտաւոր և բարյոյական
կեանքի վրայ, որ կրթութեան նպատակի մի
մասն է:

(ԱՐ ՀԱՐՈՒԴԻԱԼՈՒԲ):



ՄԱՏԵՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ

ԱՐԵՍԱԿԵՐ 1.0.ԱՏԻՎ.ԵՐՏՅԻ Վ.ԱՐԴԱՐԵՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Աշխարհաբար թարգմանեց)

ՄԻԱՅԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՏԵՐ ՊԵՏՐՈՎՆԵԱՆՑ

• • • Ողջոյն Ձեզ, յօրինիւ մատնագիրք
• թարգմանիւ զբոց ի զանազան լեզուաց հե-
լինակութեանց, զըս օկտակար համարից բա-
րոյական կրթութեան և ծեղունու արուեստին
իստութեան • • • :

• Անդր. Կոնդ. օքն. ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՒՆՅԱՆ
ԷՄԵՆՅԱ ՀԱՅՈՑ..



շանաւոր բացառութեամբ
վենիսակի և վիէն-
նայի Միսիօնարեան
միաբանների, Հայոց
մէջ ներկայումս, զը-
րագէտ անձինք շատ քը-
չերն են պարապում դա-
սական (հաւուշ) զրուածների քննութեամբ,
որն այժմ Եւրոպայի, մէջ գեղեցիկ մասնագի-
տութիւններից մինն է Համարուում: Հայու-
թեան երկու զիխաւոր կետրոններում՝ Կոստան-
դընուպոլսում և Տփիխուում ներկայումս չու-
նինք պարբերական մի հանդէս, որը նուիրած